

ՎԱՃԱՐԱԿԱՆ

Թիֆլիսի առևտորական զագեր:

Հրամագրակիւմէ շաբաթը մէկ ան-
գամ կէս թէրթ, կիրակի օրերով: 10
ամսից զինը Մարտից մինչև Յունիլա-
րը քաղաքում 2 մահ, 50 կող, դուրս
3 մանէթ:

ՏԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

(Ա.Ռ. Ա. Զ. Դ. Ն. Տ. Ս. Ո. Ւ.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Տերութենի կարգադրութիւնները, պարզեները,
առողեր և տրիշ յայտարարութիւնները: Առաւտորը
և էնափրարը Հիմիկիւմ ընդհանուր կրիզիսի պատ-
ճառները Թիֆլիսի մմի առևտորի մասին: Զա-
նազան առելեկութիւնները: Մասնաւոր յայտարարու-
թիւնները:

ԽՄԲԱԳՐԱՏԱՆԻՑ:

«Վաճառականի» խմբագրու-
թիւնը յայտնում է, որ էս տարի
յուլիսի 4-ից սկսած, բացի 10
ամսով ստորագրվիլը, ընդունում
է նմանապէս և 6 ամսով ստո-
րագրութիւն մինչև դեկտեմբերի
վերջը: Էդ վեց ամսի համար գի-
նը նշանակվում է Թիֆլիսումը՝
1 մ: 50 կ. տիկ. քաղաքիցը դուրսը՝
2 մ:

Պետ էլլի շարունակվում է
«Վաճառականի» համար ստո-
րագրութիւնը առաջին Նշ. ից էս
գումարի ճակատումը յայտնած
դներով:

ՏԵՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

ՊԱՐԳԵՆԵՐԸ:

Էս տարի մայիսի 20-ին Արևմտեան կոլ-
կասի վերջաւորապէս նուանելու ժամանակը
1864 թվան ցոյց տված քաջութիւնների հա-
մար ստացաւ Ղուրացի հետեակազօր զնաի
շաբաթ-կապիւտան ՌՈՒՆԵԱՆՑԸ 3-դ աս-
տիմանի Ստանիւալավանի իր զարդերով:

ՏՈՐԳԵՐ ԵՒ ՈՒՐԻՇ ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ:

Կովկասեան ինտենդանտի կառավարութե-
նումը էս յուլիսի 25-ին նշանակված է կու-
կասի մագաղինների համար 25,000 հաստ
կոտայց պարկեր պատրաստելու տորզը:

Օրդուբաղի նահանգական կառավարու-
թենումը օգոստոսի 16-ին նշանակված է
Օրդուբաղի պօլիցիայումը գտնված թագա-
ւարական կշխումը և նրանց պատկանելլիք-
ների ծախելու տորզը:

Կովկասեան Պրիկարպումը էս յուլիսի 20-ին
և նրանից յետոյ հետեւալ օրերը կծախսեն
արձաթեղէնները, ոսկեղէններ և ուրիշ թան-
կաղին բաներ, որոնց թափելու ժամանակը
անց են կացրել նրանց տէրերը:

Դրսի վրայ գտնված բոստովի քաղաքա-
կան կառավարութենումը էս տարի օգոս-
տոսի 4-ին նշանակված է Ղուբանի պրո-
վինատի մագաղինից Լազարեան մագաղինը
2,300 չեմիերա ալիւր և 200 չեմիերթ կը-
րուսպացի հասցնելու տորզը:

Կովկասի զինուորական խորհրդարանումը,
որ զամփամ է Թիֆլիսումը, նշանակված է
օգոստոսի 8-ին Ստավրոպոլի և Թիֆլիսի
պրովինատի մագաղինների համար 1866
թվան հիւանդանոցի առարկաներ և նիւթեր
հասցնելու տորզը:

Թիֆլիսի շրջակայ տեղերի կարգի դցելու
համար սարգման կոմիտիսան յայտնում է, որ

էս յուլիսի 30-ին նշանակված է հնտեղ Հաւ-
լաբար, Չուղլուրեթիձորումը գտնված երեք
կտոր գետին, որի ամեն մէկը 60 քառակուսի
սաժեն է: Էդ գետինների առնողը պարտա-
ւորվում է անպատճառ: Յ տարիվայ մէջ շինու-
թիւն անել: Էս գործի մասին տեղեկութիւնն
առանալու ցանկացողները կարող են դառ-
նալ էդ կոմիտիսի անդամ պ. Ֆէօդորովին:

Գաղեթին ստորագրվի կարելի է խմբա-
ղողի մօտ:

Գաղեթումը հրամարակվելու կլնդունվին
մասնաւոր յայտարարութիւնները գների
մասին կարելի է իմանալ խմբագրաստանը:

Կովկասեան Պրիկարպումը էս տարի սեպ-
տեմբերի 5-ին նշանակված է հանգուցեալ-
պատւաւոր քաղաքացի Վարդան Արշակու-
նու: Ժառանգների Թիֆլիսի 1 մասումը և 2
կվարտալումը գտնված տան ծախելու տոր-
զը: Տունը գին է դրած 42,000 մ.

Երեանի գատառական կառավարութենու-
մը էս տարի նոյեմբերի 14-ին նշանակված
է գուբերնակի սեկրետար Գրիգոր Սոլոմո-
նեանցի Երեանումը գտնված երկուտան ծա-
խելու տորզը:

Քութայիսի գատառական կառավարութե-
նումը էս տարի նոյեմբերի 7-ին նշանակ-
ված է Քութայիսի բնակիչ աղնիւ Խվան Տին-
տիկովի 5,250 մ. գին դրած երկու յարկա-
նոց տան ծախելու տորզը:

ԹԻՖԼԻՍ

յուլիսի 16-1866.

Բոլոր մարդկութենի վիճակը կախված է
առուտուրից: Աշխատանքի, գործունէութե-
նի փոխելը ապրանքների, ոսկու և արձաթի
վրայ՝ հասարակօրէն ասում ենք առ ու
տուր կամ տուր և առ: Եթէ յանկարծ
վերջանար աշխարհիա վրայ էդ առ ու
տուր է, կարելի է ասել որ ընդհանուր մարդ-
կութիւնը կկուտարանար, հարիւր միլիօնաւոր
մարդիկ քաղցած կմեռնէն և էսքան դա-
րերի աշխատանքի պատուը—այժմնան լու-
սաւորութիւնը, նորից կանհետանար աշխար-
հիս երևսիցը:

Առուտուրը նման է մեր կրակներումը վա-
ղող արիւնին, և ինչպէս որ արիւնի վաղե-
լու շտապիցնուղ կամ ծանրացնուղ լանկորը
վնասակար են մեր առողջութենին, էնպէս է
մեր անտեսական կեանքին, և բարօրութե-
նին վեաս է էն ամեն բանը, որը որ խան-
գարում է և ծանրացնում է առուտուրի ու-
ղող ընթացքը:

ՅԵՐԱՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆԻ կրած վը-
նամների զլաւուր պատճառը անշուշտ փո-
ղի դործածութիւնն է իրբե առուտառը կամ
փսխաւուրսի միջոց :

Բայց վաղին էն օրվանից կորցրեց էդ նը-
չանակութիւնները, երբ որ մարդկի վրացին
որ փողը—սակին ու արծաթիլ աշխարհիս վր-
բայ շատ քիչ է համեմատելով իր պահանջ-
վելուն հետ, երբ ուրեմն էլ չկարողացան
մարդկի տմնեն բան առնել ու ծախել նաղ-
դի—սակու ու արծաթի վրայ: Որքան շատ
ուզակներ կային սակու ու արծաթի, էն-
քան ի հարկէ էդ մևսալների զինը բարձ-
րանում էր, միւս կողմից տարեց ցատրի աւե-
լանում էր աշխարհիս վրայ շինած ասպանք-
ների որբանութիւնը, համեմատելով սակու
հանգերի բերքի հետ: Փողի էդպալի ընթացք
բանելու հետևանդն էն էլաւ, որ սակի ունե-
ցողները սկսեցին մնած զբաշտենով պահել
էդ մնալը, որ զուցէ ժամանակով իրանցը
շատ պէտք դայ, բայց էդուրալ չլիբրջացաւ
բանը, այլ էդ սակու աէրերը շարտւնակե-
ցին ժողովել սակի էստեղից ու էնտեղից և
միմիայն ժամանակ ժամանակի իրանց բարե-
կամ—սակի չունեցող պարոններին փոխ էին
տալիս տակի՝ որոշած ժամանակով, հաստատ
ապահովութիւն կամ զբաւ առնելով, էն պայ-
մանով որ յետ դարձնելիս իրեն նիւթաւոր
չնորհակալութիւն աւելացնեն էդ փողին և
շահ կամ տոկոսիք ասած փողը: Փողի էդպալ-
ով ընթացքից ծաղկութիւն է հ տ ի բ ա ր ը: Ամեն
առաջ առուտուրի մէջ ծախողը և առնողը
միմնանց ծախածի ու առածի, կամ պարզ
ասենք, միմնանց վրայ վախուսած ապրանք-
ների հաւասար հարկաւորութիւնն ունին և էդ
պատճառով հաւասար էլ ծառայութիւն են
ցոյց տալիս միմնանց: Փոխադարձարար կա-
տարած ծառայութիւնների հաւասարութիւ-
նը— էս է առուտուրի օրէնքը և նշանա-
կութիւնը, բայց միմիայն սակու առուտուրը
էդ օրէնքին չէ ընթարկում: Փողի շահու-
տալու ժամանակը մնած հարկաւորութիւնն ու-
նեցողը միայն շահով վեր առնողն է, ավողը
միայն պահանջում է հաստատ զբաւ կամ
երաշխաւորութիւն, որ իր ժամանակին ան-
շուշան կը բաղադրնեն իրան շահը վրէն ա-
ւելացնելով: Միմնանցից հարկաւորութիւն
ունենալը, միմնանց ծառայութիւնների կամ
օդնութիւնների կարօտութիւնն ունենալը շահ
ինական և հասարակ բան է, բայց փողը
կարօտութիւն ունենալը շատ անձնունտ
բան է: Էդ պատճառով ամեն փորձված մար-
և մանաւանդ էնախբար տաղով միշտ աշխա-
տում է փախչիլ էնախբար ստանարութիւն, որով

հնատ է հոտիբար ստացողը բարյացակէս ճորտ
է դառնում էնտիբար տվողինը: Ես բանը
ամենից լաւ հասկացաւ հրէից ազգը: Հրէա-
ները, կորցնելով իրանց քաղաքական դրու-
թիւնը, իրանց տէրութիւնը և զրկիլով հայ-
րենիքից, ամեն ազգերից առաջ հասկացան
փողի նշանակութիւնը և սկսեցին ժողովիլ
ոսկին ու արծաթիլ ու շառով տալ, էնտիբա-
րի առուտուր սարդիկ: Իրանց թշնամինե-
րից կրած անթիւ հալածանչները ստիպւցին
Խորայելացաց իրանց ազգատութիւնի գործիք
շնուր ոսկին և արծաթիլ և ճշմարիտ որ ոս-
կին միշտ փրկել է հրէաներին: Բարեկացի-
ները, Յոյները և Հատկմայեցիները, մէկ խօս-
քով հրէից բոլոր թշնամիները և հալածառ-
ները վաղուց անհետացան աշխարհիս երե-
սից, որովհետև նրանք չհասկացան ոսկու փըր-
կարար զօրութիւնը: «Փողը մեր ոյժն է,
ոսկին միայն կազմոէ մեզ կրակից, սրից և
մահից» ասացին հրէաները և էս հաւատով
փողի պատերազմ բաց արին իրանց թշնա-
միների հետ և մերը յաղթող դանվեցան:
Այժմ աշխարհիս վրայ առաջին երեսելի փո-
ղատէրերը և բանկիրները (զառաֆները) հը-
րէաներն են, դրանք մեծ մեծ հարստութիւն-
ների տէրեր են և մեծ ազգեցութիւն ունին
բոլոր տէրութիւնների քաղաքականութիւնի
և անտեսական վճարկի վրայ: Ողջ աշխար-
հին յայտնի են Յօդշլիդների, Խահակ Պարէյ-
րի, Բարուս Ֆուլգի, Միրեսի և ուրիշ շատ
շատ երեսելի հարուստ հրէաների անտեսները:

U. b.

ՀԱՄԻԿՎԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԲԻԶԻՍԻ
ՊԱՏՃԱՌՆԵՐԸ:

Մեր գաղեթի մէջ իր ժամանակին յայտնիցինք կօնդոնի Օվերենդ, Գարնեջ և Ընկ. 100 մլիոն մասէթով կուտրանալը, որը որ սարսափ զցեց ոչ միայն Լօնդոնի, այլև և ամբողջ առևտրական աշխարհի վրայ։ Անդւիայի վաճառականութը գարձան դէպ ի Անգլիայի բանկը խնդրելով որ բանկի էն կանոնը էս անդամ փոխվէր, որով բանկի առմասկների գուրս տալը որոշած թվից աւելի շի կարող լինիւ: Բանկը իր զիսկոնտը մինչև 10% բարձրացնելուց յետոյ համաձայնեցաւ վերսովիշեալ կանոնը փոխելու և նորից էլի տոմսակներ դուրս ամեց, բայց էղ բանն էլ բարսովին առանց օդուտի անցկացաւ: Եդամանակը ամենքը սալատում էին զործի լաւանալու համար Ամերիկայից ու Ասիայից ուկուն ու արծաթին: Ուկին ու արծաթը մերմենդաւ:

Անդիմայոց բանկը մինչև հսօր էլ գրատօնութեան 100%-ից չեղած այսուհետեւ Ամերիկայումը նմանապէս առուտուրը ճանր էր զնուամ ինչպէս շատ նազդ ունի էլած ժամանակը, նոյնպէս և էդ թանհիկացին մնաաների Ներուայ անցիկնալուց յետոյ: Էդ բոլորից պարզ ձագում է ին հետևանքոք, որ փողը շատ մեծ նշանակութիւն չունէ առուտուրի համար. ոսկու քիչ էլած ժամանակը կարող է առուտուրը նոյնքան լաւ լինիլ, որքան ուկու էլած ժամանակը կարող է լինիլ վատ: Լաւ առուտուրի ժամանակը, երբ որ կայ է հափրար, շատ քիչ առուտուր անող նազդի կառնէ ազրանք, նա ովոր ունի 50,000 մանէթ՝ 300,000 մանէթի պատասխանաւութիւն է իրա վրայ մեր առնում: Բաց ի էդ 1857—58 թւի կրիզիսը պարզացրուց մէկ քանի անցքեր, որ ին առուտուրական աները, որոնք 400,000 մանէթ նազդ փող ունէին, նրանք 27 միլիոնի վեկիսիների վճարելու յանձնառու էին լինում: Քանի որ էդ առեարական արները լաւ էնտիբար ունին, զբանք միմեանց վրայ դուրս են տալիս վեկիսիներ, և էդ ապիսով թուղթովին իրանց յոյսը գնում են թուղթիրի վրայ: Էդ ժամանակը թուղթին էնպիսի մէկ նշանակութիւն է ստանում, որ ակամայ կարծում է մարդ թէ սակին ու արծաթը բոլորովին կարող են դուրս դցվիլ գործածութիւնից և աեղը թուղթ գործ գնել: Բայց երբ որ ապրանքներ շատ կան ու գործ ածովները քիչ են, երբ որ ապրանքները վաճառականի շնորհն են մնում ածած, երբ միւս կողմէց վերջապէս էդ մի և նոյն ապրանքի բերողները տևելանում են, ին ժամանակն էն թուղթը, էն վեկիսիլ, որի վրայ առաջ ամենքը շատ յարգանքով էին մտիկ տալիս, հիմի յանկարծ կորցնում է իր էնտիբարը և ամենքը թղթի տեղ մէկ նիւթաւոր մէտաղէ փող են ուղարմ: Առաջ որ 100 մանէթանոց թղթի վրայ ամենքը էնպէս էին մտիկ տալիս ինչպէս 100 մ. ուկու և արծաթի վրայ: Հիմի երբ դէպի թուղթն էլ էնտիբար չկայ, ամենքը ցանկանում են, որ իրանց 100,000 մանէթը չէ թէ միայն առեարական դաւթարների մէջը լինի նշանակած, այլ և էդ փողը ուկու ու արծաթի ձեւով իրանց մնդուիներումը լինի կողպած: Պէտք է զիտենալ, որ փողի պակասութիւնի և կրիզիսի պատճառն է առուտուրի դադարիլը, ծախսի քչութիւնը և առ հասարակ էնտիբարի պակասիլը: Փողի կրիզիսը առուտուրի դադարելու հաջարելու հետևանքն է և ոչ թէ պատճառը: Յայմի է, որ փողի կրիզիսի ժամանակներն էլ էնտիբար ունիցող մարդիկը

ուկուէ և փիլէլինը, որ մեծ մասով վաստուկ միտէ մէկ գնուլ է ծախվում: Անիրաւ է եղ բանը: Տաւարի աւելի մոտ և փափուկ մասերը պէտք է առաջին տեսակ շնուր և բարձր զին նշանակել, նրանից պակաս մոտ մասերը երկրորդ տեսակ՝ նրանից պակաս զընով և վերջապէս շատ ուկուսում և ջլոտ մասերը—էլի աւելի պակաս գնուլ: Առաջին տեսակը օրինակ որ 6 կոտէկով լինի, երկրորդը պէտք է լինի 4 և երրորդը 2 կոտէկով բոլորովին խճանակով լինի, էնպէս որ միջին հաշուով ֆունտին էլի 4 կոտէկ է դաւլիս ծախողին: Ծախողը չէ կորցնում ոչինչ, առ իր վարձը լինին ստանում է և մի և նոյն ժամանակը առնողն էլ բոլորովին ապահոված է, դիտենալով, որ լաւ մոխն շատ փող պէտք է տայ և վատին քիչ: Ի հարկէ էն ժամանակը չեն պատահիլ էն բաները ինչպէս հիմի, որ երկու կամ երեք ֆունտ լաւ լաւ մոխն հետ, մէկ էդքան էլ վատ, ուկուսում և ջլոտ միտ են տալիս: Ծախողը հարկաւորթիւն չի ունենալ էդ խարդախութիւնն անելու, որովհետեւ նա լաւ միտ գնով և վատ միար փոքր գնուլ ծախելով էլի էն կըսանայ էն ժամանակը, ինչ որ հիմի լաւ ու վատը մէկ գնուլ ծախելով:

Բայց բանը միայն տաքսայի նշանակելը չէ, բանն էն է, որ նշանակած տաքսան պահպանի և ճշդութենով կատարվի: Մենք տեղակացած ենք, որ էն ժամանակը, երբ որ Թիվվառումը մսի տաքսան 4 և 5 կոտէկ էր փունտին, ծախվումէր շատ անդամ 7, 8 և 9 կոտէկով: Չես տալ աւելի, անմիտ էլ իմնաս: Եղուէս էլ լինում էր: Մենք կարծում ենք, որ տաքսայի պահպանելը ժողովրդիցն է կախված, Տեսար տաքսայիցն աւելի է պահանջում ծախողը, պահպանէ քո իրաւոնքները, պահանջէ, որ իշխանութենով պէտք է, քո վասար և ծախողի արած անիրաւութիւնը: Անիրաւը, խարդախութիւնը պէտք է պատժի, որ տաքսան էլ ունենայ նշանակութիւն: Թէ չէ ինչ նման է տաքսան և ինչի համար է, եթէ ոչով չի կատարի և ոչ մէկն էլ չի պահանջի կատարելու:

Վերջացնելով էս անդամով մոր խօսքերը, հարկաւոր ենք համարում ասել, որ լաւ կըսեմնէր էթէ ծախու չոր ծուկն էլ նմանակէն տեսակ աւեսակ բաժանմէր և էնպէս ծախմէր նշանակված գներով:

ԶԱՆԱԳԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Խօսքերայի մասին: Ռուսաստանումը կրկմենչուդ քաղաքումը, որ գտնվում է Պո-

լտավայի գաւառումը յունիսի 1-ից մինչև յունիսի 7-ը 100 մարդ է հիւանդացել խօսքերայով, որոնցից 20-ը մեռել է:

Նեկուլաևի քաղաքումը, որ գտնվում է Խելունի գաւառումը մէկ մարդ է մեռել խօսքերայով յունիսի 11-ին:

Արոնշտանդ քաղաքումը, որ գտնվում է Պետրովուրդի գաւառումը յունիսի 15-ից մինչև 25-ը 20 մարդ հիւանդացել է խօսքերայով:

Խօսքերան երեւել է նմանապէս և Հիւսփային Ամերիկայի մէկ քանի տեղերումը:

Ֆրանսիայումը խօսքերան երեւել է շատ տեղերումը, մանաւանդ հիւսփային մասերումը: Ամիեն գաւառումը աւելի սաստիկ էր խօսքերան և էդտեղ գնաց ֆրանսիայի Թագուհի Յլդենին հիւսփային այցելութիւն անելու:

Խօսքերան սաստկանում է նմանապէս Հուլյանդիայումը, Ինդիայումը, Սաքսոնիայումը և Գրունլանդիայումը:

Քերլինումը խօսքերան օրէցօր սաստկանում է: Մինչև յուլիսի 5-ը հիւանդացել է խօսքերայով 378 մարդ, որոնցից 245-ը մեռաւ: Յուլիսի 5-ին և 6-ին հիւանդացել է էդտեղ խօսքերայով 148 մարդ, որոնցից էդ օրերումնելիք 71 մարդ մեռաւ:

Պիկիթարական լուր Գորի քաղաքից: «Մերու Հայաստան» 26-դ №ումը ապրիլ Ամսն Սկզբունքնի նամակից երևում է, որ յունիսի 20-ին էնսալի աղքացին հոգեսր գողրոցումը հարցանառութիւն է էլել և աշակերտները շատ յաջող են դուրս եկիլ թէ կրօնից, հայկաբնութենից, պատմութենից, աշխարհազրութենից և թէ սուսաց լեզուից: Աշակերտները շատ պարզ են խօսում հայերէն: Հայերէն լեզուի համար շատ է աշտատել էդ ուսումնաբանումը պ. Մաղաքեայ Պլուզեանցը, որն որ ահա 6 տարի է պարագան է էդ ուսումնաբանումը անդադար: Ասում ենք միխթարական է էս լուրը, որովհետեւ գորու պէտք քաղաքումը հայերէն լեզուի էդքան յառաջադիմութիւնը բաւական զարմանալի բան է: Տասը տարի առաջ էդտեղ ողջ քաղաքումը մէկ հայերէն անուղղ անկարելի էր դանել, քահանաներն էլ ասիստիված էին իրանց քարողները վրացերէն ասելու, որ հայերէն հասկանալի վւնի: Հիմի էդ ուսումնաբանումը աւարտողներից շատերը քահանայ են դառնում և տարէ ցտարի հայերէն լեզուի մէրն աւելացնումը ժողովրդի մէջն անդադար:

ԱՐԵՒՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Խօսքերայով յունիսի 27.

Տեղեդրաֆով իմաց են անուշ, որ ծախմել է 12,000 հակը բամբակի գները հետո հարձրանում են:

Պատերբուրդ յունիսի 28.

5% Լատարեայով առաջին փոխառութենի տոմանակների գները բարձրացան 111 1/2 մանէթից մինչև 113 մ:

5% Լատարեայով երկրորդ փոխառութենի տոմանակների գները բարձրացան 105 1/2 մանէթից մինչև 107 մ:

Ասկին 7 մ 23 կ.

Կուրսը Լուսպնի վրայ 3 ամիս ժամանակով 27 1/2 պէնս:

Պարիսի վրայ 283 սանտիմ:

Թիֆլիս 1866 յուլիսի 16.

Բամբակի առուասուր չկայ:

Բրդի առուասուրը թոյլէ:

Ինգլիզու շաքարը 10 մ 80 կ.

Ասկինը 11 մ 20 կ.

Արծաթը 72 պլութի 85 մ:

— 84 պլութի 350 մ:

Ասկին 7 մ 10 կ. և 7 մ 20 կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ:

Դուրս եկաւ Գ. Ս. Ա.-ի և Ա. Ե. աշխատախած ռուսերէն Պառլամենտի գլուքին յարմարացած «Բնիթերյարան» հայերէսակների համար» որ պարունակումէ ութածալ 97 երես: Ծախմատը է «Վաճառականի» խմբագրաւունքները: Գինը հատուկ առնողների համար 40 կ. է, իսկ գումարութիւն առնողների համար՝ 35 կոս:

Հս գրքից ծախմատը թիֆլիսումը նախապէս գրավածանումը պ. Ա. Ֆնիխաձեանցի մազապինումը: